

մանն յուշ առնելով, զգուշացուցաներ ամենայն մարդոյ. մինչեւ բազմաց խստագոյնս եւ դժուարագոյն համարեալ զծանրաբեռն վարուցն կրթութիւն. մանաւանդ զի զմտաւ ածեր ըստ ծերունական հասակին զմատաւոր վախճանն, չտայր քուն աչաց եւ ոչ նիրի արտեւանաց եւ ոչ հանգիստ տիրանաց մինչ հասանել ի հանգիստ Տեառն:

4 Եւ մինչդեռ այնպէս մերձաւորացն առ իւր եւ զհոգեւոր եռանդն ածեր, անդէն ի նմին ամի՝ յետ ամ[սոյ]ց վեցից անցելոց վախճանի երանելոյն Սահակայ. լինէր հանդերձ սրբով վարդապետաւն ի բանակն Հայոց յԱյրարատի Նոր Զաղաքի եւ Նորին հոգեկրան վարուք հասաներ ի քրիստոսակոչ կատարումն, յետ սակաւ ինչ աւուրց հիւանդութեանն, յերեքտասաներորդի ամսոյն Մեհեկանի: 5 Յորժամ ի միջոյ ձեռասուն աշակերտացն ի գունդն Զրիստոսի հասաներ, խառնեալ թեթեւացեալ եւ սթափեալ ի ցաւոցն, կանգնեալ նստաւ ի ժողովրդոցն ի միջի, եւ ամբարձեալ զձեռս իւր համատարած յերկինս՝ զամենայն մնացեալսն յանձն առնելով շնորհացն Աստուծոյ եւ վասն նոցա աւգնական հայցեր:

6 Եւ անուանք զխաւորացն ժողովելոցն աշակերտացն են այսոքիկ. առաջնում Յովսէփ, եւ երկրորդին Թադիկ, արք ըզգաստք եւ զգուշագոյնս վարդապետական հրամանացն: 7 Իսկ ի զինուորացն՝ առաջինն Վահան յազգէն Ամատունեաց, որ էր հազարապետ Հայոց Մեծաց. եւ երկրորդին Հմայեակ՝ ի Մամիկոնեան տոհմէն, արք պատուականք եւ երկիւղածք, աստուածասերք հրամանակատարք վարդապետական բանից: 8 Եւ մինչդեռ ձեռք սրբոյն կարկառեալ կային, տեսիլ սքանչելի խաչանշան լուսաւոր շողացեալ ի վերայ ապարանիցն, յորում երանելին վախճանէր, զոր ամենայն ուրուք ինքնատես եղեալ, եւ ոչ ի յընկերէ պատմել. եւ ապա զսրբոցն եւ զսեր եւ զմիաբանութեան պատուիրան աւանդել եւ զմերձաւորս եւ զհեռաւորս արինութեամբ պսակել. եւ զհաճոյական աղաւթս հատուցեալ ի Զրիստոս՝ հանգեալ:

9 Չոր առեալ Վահանայ եւ Հմայեկի կազմութեամբ վախճանելոյ, հանդերձ աշխարհակոյտ ամբոխիւն, սաղմոսիւք եւ արինութեամբ եւ հոգեւոր ցնծութեամբ, կանթեղաւք վառելովք եւ ջահիւք բորբոքելովք եւ խնկաւք բուրելովք եւ ամենայն լուսաճաճանչ գնդիւն, եւ այնու խաչանշան լուսովն առաջխաղացեալ յԱւշականն ելանէին, եւ անդի մարտիրոսական բնականութիւնսն մատուցեալ եւ զարինաւոր յիշատակ երանելոյն կատարեալ, ապա նշանն աներեւոյթ լինէր, եւ Նոքա յիրաքանչիւրն դառնային տեղիս:

10 Իսկ յետ երից ամաց անցելոց, յաջողելոյ Վահանայ Ամատունւոյ, քրիստոսասեր փութով խորան կանգնեալ, տաշածոյ վիմաւք քանդակելով, եւ ի ներքսագոյն խորանին զսրբոյն հանգիստն յարինեալ, որոյ սպաս եւս